ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Վ. ՋԻԼԱՎՅԱՆ

«23» 07 2020թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

**ԲՓ** 000054

***Ձեռնարկողը՝*** ***«Մառա և դուստրեր» ՍՊԸ***
*Ք. Երևան, Բուզանդի 1/3*

***Գործունեությունը՝*** ***Մալաթիա - Սեբաստիա վարչական շրջանի Արարատյան 2-րդ զանգված հասցեում թիվ 116 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
*քաղաք Երևան*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարզյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000054

<23> 07 2020թ.

***Երևան քաղաքի Մալաթիա - Սեբաստիա վարչական շրջանի Արարատյան 2-րդ զանգված հասցեում թիվ 116 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

**Ներածական մաս.**

Ձեռնարկող՝ «Մառա և դուստրեր» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

«Մառա և դուստրեր» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Արարատյան 2-րդ զանգված հասցեում դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում իրականացնել թիվ 116 դպրոցի կառուցումը:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 11.478,3քմ մակերեսով հողամասի 11.138քմ տարածքի վրա, քանի որ տարածքում առկա են կառուցապատված ավտոտնակներ, որոնք չեն ապամոնտաժվելու: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

**Նկարագրական մաս.** Կառուցապատման ենթակա տարածքում այսօր գործում է թիվ 116 հիմնական դպրոցը: Տարածքը կառուցապատ է, առկա է կանաչապատ գոտի, որտեղ աճում են միջին և փոքր տարիքի ծառատեսակներ:

Կառուցապատվող դպրոցի տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Հիդրոերկրաբանական տեսակետից կառուցապատվող տարածքում գրունտային ջրերը չեն հայտնաբերվել մինչև 14.0 մ խորությունում: Բնության հատուկ պահպանվող և պատմամշակութային հուշարձաններ չկան:

Համաձայն նախագծի դպրոցը բաղկացած է լինելու սեյսմիկ կոնստրուկտիվ կարերով միացված 5 մասնաշենքերից:

Ուսումնական մասնաշենքերը և երրորդ մասնաշենքը բաղկացած կլինեն 3 վերգետնյա հարկերից, չորրորդ մասնաշենքը միահարկ է, իսկ հինգերորդ մասնաշենքը կծառայի որպես մարզադահլիճը և հանդիսությունների դահլիճը, որը նախագծվել է միահարկ: Նախատեսվում է մեկ խաղահրապարակ՝ 1950 քմ մակերեսով:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է տվյալ միջավայրում առկա կառույցներին և չի հանդիսանում տեսադաշտի խոչընդոտ շրջակա բնակչության համար:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

Հողատարածքի ընդհանուր մակերես – 11.138քմ (11.478,3քմ)

Կառուցապատման մակերես – 4.034քմ

Բարեկարգման մակերես – 5.123քմ

Կանաչապատման մակերես - 1981քմ

Դպրոց նախագծային հզորությունը – 600 աշակերտ:

Դպրոցն ապահովված է լինելու ջրի, էլեկտրաէներգիայի և գազի առանձին միացումներով:

Էլեկտրամատակարարումն իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն՝ միանալով 0,4կՎտ օդային մալուխային գծին: Նախատեսվում է 30,6կՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում դպրոցի տանիքին, որը կազմված է 90 հատ միաբյուրեղային 340Վտ (2x60 կեսբջիջ) պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից:

Դպրոցի ջեռուցումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող կաթսայատան միջոցով: Կաթսայատան շահագործումը կիրականացվի ջրային երկու կաթսաների միջոցով յուրաքանչյուրը՝ 300կվտ հզորությամբ և բնական գազի այրմամբ: Բնական գազի առավելագույն ծախսը գնահատվում է 56.6 մ³/ժ:

Կաթսայատան ջուրն օգտագործվելու է միայն ջրաջեռուցիչ կաթսայի և ջերմային ցանցերի միանվագ լցման համար, որը հետագայում կլրասնուցվի համակարգում ջրային կորուստների առաջացման դեպքում:

Գազամատակարարումն իրականացվելու է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն:

Ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ հետ կնքված պայմանագրի՝ միանալով d=200մմ ջրագծին՝ d=75մմ միացումով և d=300մմ կոյուղագծին՝ d=200 մմ միացումով:

Շինարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 26 ամիս:

Շինարարության ժամանակ բնառեսուրսից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Տեխնիկական նպատակով, աշխատողների կենցաղային և խմելու նպատակով ջրամատակարարումն իրականցվելու է գոյություն ունեցող ջրագծից: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (42 մարդ) և կազմել 564.564մ³/շին.ժամ կամ 0.99մ³/օր: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 194.4մ³/շին.ժամ կամ 0.54մ³/օր: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 758.964մ³/շին.ժամ:

Երկաթբետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 6.418,45մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 3.272մ³ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, իսկ մնացած 3.146,45մ³ կօգտագործվի որպես հետլիցք:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում՝ 9.080մ³ ծավալով շինարարական աղբը և ավելորդ գրունտն է, որն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ շինանյութերը՝ կառուցվածք, ամրան, բետոնաշաղախ, կաֆել, մետլախ, լամինատ և նմանատիպ այլ նյութեր ձեռք են բերվելու լիցենզավորված մատակարարներից:

Նոր կառուցվող բնակելի շենքերի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու և շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված է.

– շինարարական աշխատանքների /փոշու առաջացման աշխատանքներ/ ընթացքում, փոշենստեցման նպատակով, ջրցանի իրականացում տարվա շոգ և չոր եղանակներին,

– արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքի դադարեցում և փոխարինում պատշաճ վիճակի մեքենաներով,

– արտահոսքերի դեպքում աղտոտված հողային զանգվածի հեռացում՝ հնարավոր աղտոտումը կանխելու նպատակով,

– վառելիքի և նավթանման նյութերի պահում բետոնե կամ ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա,

– հեղուկ նյութերի տեղափոխում շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահում հատուկ անթափանց տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

– աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում ցերեկային ժամերին,

– փոխադրամիջոցների ապահովում աղմուկի կլանիչներով և խլացուցիչներով,

– շինարարական մեքենաների տեղաշարժի իրականացում 30կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,

– աշխատանքների ավարտից հետո տարածքների մաքրում և առաջացած թափոնների տեղափոխում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

– կանաչապատման իրականացում համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 7.717.334 ՀՀ դրամ :

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը կբարեկարգվի և կկանաչապատվի: Նախագծվող դպրոցի կառուցապատման նպատակով տարածքի թվով 21 մեծ և փոքր ծառերը, քաղաքապետարանի հետ համաձայնեցված, նախատեսվում է վերատնկել գործունեության ընթացքում իրականացվող կանաչապատման աշխատանքներին նախագծին համաձայն՝ հաշվի առնելով ծառերի կենսունակությունը: Բացի այդ կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է լրացուցիչ ծառատունկ, որի շրջանակում կտնկվի 7 հացենի, 11 գնդաձև ակացիա, 18 գնդաձև թույա:

Նորաստեղծ կանաչապատ գոտիների համար կբերվի 380 խմ բուսահող, պայմանագրային հիմունքներով: Կանաչապատ գոտիների ոռոգման գործընթացը կկազմակերպվի նախագծվող ոռոգման ցանցի միջոցով, որի կմիացվի Կուրղինյան նրբանցքով անցնող Φ78մմ ոռոգման համակարգին: Ոռոգման ցանցը նախագծված է պոլիէթիլենային խողովակներով, որոնք կտեղադրվեն 0.4մ խորության վրա, իսկ անցուղիներում խողովակները կանցկացվեն Φ100-150մմ պողպատյա պատյանով: Ոռոգումը կիրականացվի ռետինե ճկափողով փականներով կարճախողովակներից:

**Պատճառաբանական մաս.** Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել է առողջապահության նախարարությունը, քաղաքաշինության կոմիտեն: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Արարատյան 2-րդ զանգված հասցեում

թիվ 116 հիմնական դպրոցում անցկացվել են հանրային քննարկումներ գործունեության իրականացման վերաբերյալ, որը հանրության կողմից արժանացել է հավանության:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

## Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը, շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:
- Դպրոցի շահագործման ընթացքում պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի պահանջները:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մառա և դուստրեր» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա–Սեբաստիա վարչական շրջանի Արարատյան 2-րդ զանգված հասցեում թիվ 116 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ Հ. Ալեքսանյան